

մանափակ ու քիչ են Գրիգոր Կեսարացիի գործունէութեան մասին :

Միւս պատմիչը՝ Գրիգոր Դարանաղցի շատ ընդարձակ ծանօթութիւններ և մամբամասնութիւններ ունի իր մասին, վասընզի ապրած է ճիշդ այն միջավայրին մէջ ուր Գրիգոր Կեսարացի գործած է : Սակայն շատ հեռու է անկողմնակալ պատմիչ մը ըլլալէ, վասնզի անձնապէս խառնուած է այդ դէպքերուն զորս կը պատմագրէ : Ինքն մասնակցած է պայքարի և Գրիգոր Կեսարացի պատրիարքին հակառակորդներուն հետ գործակցած : Հետևաբար իր արտայայտութեանց մէջ անձնական կիրք ու զգացում դրած է և շատ անգամ Կեսարացին կ'որակէ այնպիսի ածականներով որոնք իր ներքին մաղձը և թոյնը կը մատնանշեն : Ան ի դէպս և յանդէպս Կեսարացին կը կոչէ «անհամարիտ, անկամոտ եւ գոռոզ բարուք», «բռնաւոր վիշապ», «անյագ գայ», «իստատոյ», «գազանացեալ», և այլն, անտեղի և անվայել մակդիրներով :

Այս ծանօթութիւնները հարկ է միշտ ի մտի ունենալ, վասնզի յաճախ կարգ մը դէպքերու համար, չունենալով ուրիշ աղբիւր ստիպուած պիտի հետեւինք Դարանաղցիի տեղեկութիւններուն, որոնք միշտ գունաւորուած են, ինչպէս ըսի :